

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

(Օտարաբաղադրացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусава“)

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւտեան 10—2 ժամ
(Նացի կիրակի և սուրբ օրերին):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Երկուսից մէկը.—Ն եւ իւրին տեսութիւնը:
Նամակ Ղարսից: Նամակ Նոր-Նախիջևանից: Նա-
մակ Շուշուից: Ուրտաքին տեսութիւն: «НОВОЕ
Время» լրագիրը հայերի մասին: Թիֆլիսի
Ֆրանսիայ: Արտաքին լուրեր: «Մշակի» հետազոտ-
ներ: Յայտարարութիւններ:

ԵՐԿՈՒՍԻՑ ՄԷԿԸ

Մինչև այժմ յայտնի չէ ի՞նչ
սկզբունքներ է հետևում Թիֆլիսի
Հայաստանում վերանորոգութիւն-
ներ մտցնելու գործում՝ կրօնա-
կան, Թէ ազգային սկզբունքներ:
Մինչև այժմ յայտնի չէ ի՞նչ տե-
սակէտից է նայում լուսաւորված
Լեւոյան ասիական Թիֆլիսից
բնակիչ ժողովուրդների վրա, որոնց
համար բարենորոգումներ է պա-
հանում՝ արդեօք նայում է Լե-
ւոյան նրանց վրա, որպէս ազ-
գութիւնների վրա, Թէ որպէս
կրօնական համայնքների վրա:
Ի հարկէ եթէ Թիֆլիսից Հա-
յաստանի ազգաբնակչութիւնը կը
բաժանվի այն ձևով, որ մի կողմ
կը դրվեն բոլոր մահմետականնե-
րը, իսկ միւս կողմ՝ միմիայն Հայ-
լուսաւորչականները, —այդ վերջին-
ների Թիֆլիս շատ նշանաւոր չի ե-
րևայ և մահմետականները, ի
հարկէ, մեծամասնութիւն կը
կազմեն:

Բայց մեր կարծիքով, արդար
լինելու համար, պէտք է երկուսից
մէկն անել՝ կամ պէտք է բաժա-
նել Հայաստանի ամբողջ ազգա-
բնակչութիւնը երկու որոշ խմբերի
վրա՝ արդարութեամբ գործ դնե-
լով կրօնական սկզբունքը, կամ
բաժանել այդ ազգաբնակչութիւնը
երկու որոշ խմբերի վրա՝ գործ
դնելով ազգային սկզբունքը:

Ըսածին դէպքում, եթէ մէկ
կողմ են դնում մահմետական-
ներին, միւս կողմ պէտք է դը-
նել ոչ Թէ միայն Հայ-լուսաւոր-
չականներին, այլ Հայաստանում
բնակվող բոլոր քրիստոնէականե-
րին, այն է՝ Հայ-լուսաւորչական-
ներին, Հայ-բողոքականներին, Հայ-
կաթօլիկներին, Հայ-յուդաւաւա-
ններին, օրթօդօկս յոյներին, կա-
թօլիկ յոյներին, ասորի-նեստորեան-
ներին, ասորի բողոքականներին,

ասորի-կաթօլիկներին, կաթօլիկ
արարներին, քաղղէացիներին (քիւ-
ղաններին), եաղուրներին, ասո-
րի-ճուլսներին և այլն. իսկ միւս
կողմ կը մնան մահմետականներ,
այն է՝ Թիֆլիսի, Երևանի, Թուրք-
մէնի, զազանի, աջարցիների,
չերկէզների, բոշաների և մահմետա-
կանացած քրիստոնէայ այլ և այլ
ցեղեր:

Բայց եթէ Հայաստանում
մտցնելու բեֆօրմների իրագործ-
մանը պիտի գործադրվի ազգա-
յին պրինցիպը, այն ժամանակ
ի՞նչ գործ ունի այդ ամբողջ խմ-
բի մէջ կրօնական տեսակէտը,
այն ժամանակ ի՞նչ իրաւունքով
Հայաստանի ամբողջ ազգաբնա-
կչութիւնը բաժանում են կրօնա-
կան երկու համայնքների վրա՝
մահմետականների և քրիստոնէա-
նների վրա, այն էլ դիտմամբ չը
յիշելով բոլոր քրիստոնէականներին,
այլ նրանց մի մասը միայն:

Թիֆլիսի կամենում է մոլո-
րեցնել Լեւոյանի հասարակա-
կան կարծիքը, բաժանելով Հա-
յաստանի ազգաբնակչութիւնը եր-
կու որոշ խմբերի վրա, մի կողմ
դնելով բոլոր մահմետական-
ներին, իսկ միւս կողմ՝ յիշելով
միմիայն Հայերի մի մասը, ու-
րեմն ձեռնարկվում է մասամբ
կրօնական սկզբունքով, մասամբ
էլ ազգային սկզբունքով:

Եթէ կշռվի կողմ դնում էք
բոլոր մահմետականներին, արդարութեամբ պահանջում է որ
գուր կշռի միւս կողմը դնէք
Հայաստանի բոլոր քրիստոն-
էականներին:

Իսկ եթէ ազգային տեսա-
կէտից էք նայում Հայաստանի
ազգաբնակչութեան վրա, բոլորու-
մին ուշադրութիւն չը դարձնելով
կրօնի վրա, այն ժամանակ հա-
յերի, որպէս ազգութեան Թիֆլիս
Լեւոյանի ցոյց տալու ժամա-
նակ, քրիստոնէայ հայերի հետ
միասին պէտք է հաշւէք և
մահմետական հայերին:

Ըհա ինչ պէտք է հասկանայ
Լեւոյան:
Թիֆլիսի կողմից դա խար-

դակութիւն է, կամ կատարեալ
անհասկացողութիւն է:

Երկուսից մէկը, կրկնում ենք
մենք. եթէ յիշում էք բոլոր
մահմետականներին, յի-
շեցէք և բոլոր քրիստոնէա-
ններին: Իսկ եթէ յիշում էք
հայերին, ուրեմն ազգային
տեսակէտից էք սկսում նայել
ազգաբնակչութեան վրա, այն ժա-
մանակ յիշեցէք բոլոր հայերին,
ուրեմն և մահմետական հայերին:

Բերլինի դաշնագրի 61-որդ
յօդուածում Լեւոյան նեղ կրօ-
նական հայեացքին չէ հետևել,
այլ հետևել է լայն ազգային
պրինցիպին: Նա չէ պահանջել
վերանորոգութիւններ Հայաստա-
նում բնակվող այն հայերի համար
միայն, որոնք ենթարկվում են
Լեւոյանի վանքի հոգևոր իշխա-
նութեանը, այլ ամեն հայերի
համար:

Ի՞նչ գործ ունի կրօնը ազ-
գութեան հետ: Մի ազանդի հա-
մար բեֆօրմներ չէին պահանջի,
այլ մի ամբողջ ազգի համար: Իսկ
հայոց ազգը Թիֆլիսից Հա-
յաստանում բաղկացած է լուսա-
ւորչական հայերից, բողոքական
հայերից, կաթօլիկ հայերից, յու-
նադաւան հայերից և մահմետա-
կան հայերից:

Թող այս տեսակէտից նայելով
հայերի վրա Թիֆլիսի հաշի
նրանց Թիֆլիս և Թող այն ժամա-
նակ Լեւոյան հասկանայ՝ իրա-
ւունք ունի արդեօք հայոց ազգը
կատարեալ ինքնավարութիւն ըս-
տանալու:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՐՍԻՑ

Մայիսի 23

Ուղարկում ենք ձեզ մի գումար, որ ժողովեցիք
կարսի հայ հասարակութիւնից յօդուած վասպու-
րականի սովորող, ջը նախելով տեղիս սովին և ան-
պատմիկ թանգութեամբ, պէտք է ասել որ ժո-
ղովուրդը համակրութեամբ ընդունեց մեր առա-
ջարկութիւնը և իր աղքատիկ քանակի ամենայն
ընթացքով իր անհատական տուեց այդ նուէրները: Նու-
րաբանաց ցուցակից կը տեսնէք, որ ոչ մի պարոն
փորքի չատէ նշանաւոր գումար նուիրած չէ,
սորա պատճառ հասկանալի կը լինի, եթէ ասեմք

որ այդ գումարը ժողովել ենք գրեթէ հասարա-
կութեան միջին և ստորին դասակարգերից, իսկ
տեղիս հարուստ աշխարհիկները, մի քա-
նի բացառութեամբ, չը կամենայ մասնակցել, վա-
խենալով որ մի գուցէ զրկվին իրանց պաշտած
կիսաստուածից: Սակայն այնու ամենայն մեզ
գուցէ և կը յաջողէր ասելի սնծ գումար ժողովել,
եթէ մի հանգամանք արգելէք չը դառնար: Սորա-
նից առաջ գաղթական աշակերտներին և տե-
ղիս բնակիչ հայ աղքատներին հաց մատակարա-
րելու համար սրբազան առաջնորդի յորդորանք
ժողովրդեան զոհաբերութեամբ հաւաքվեցաւ 2500
ր., այդ գումարից Յարութեան տունին 400-ի չափ
բաժանվեցաւ աղքատներին, իսկ մնացեալ գու-
մարի մի մասը դեռ ևս բոլորովին չէ հաւաքված
իսկ միւս մասը մասնաժողովի անդամների համա-
ձայնութեամբ տուած է մի վաճառականի տոկո-
սով, երեկ այն նպատակով, որ այդ գումարը իր
բարդ տոկոսներով անելով, 50 տարուց ետք, գա-
լուց սովի ժամանակ գործածվի: Այս, միայն այդ-
պէս կարելի է բացատրել այդ գումարի տոկոսով
տալը այս ճշմարտութեամբ մէջ, երբ կարսի ամեն մի
դրան առաջ թափված կը տեսնէք հայ գաղթա-
կաններ իրանց մեկ և բոլորտն երեխաներին
ձեռքերից բռնած հաց մուրալով: Մասնաժողովի
այդ տեսակ անհրաժեշտ վարձուքը իրանց յանձն
առած պաշտօնի մէջ խոչնդոտ դարձաւ յան ա-
ւելի նշանաւոր գումար ժողովելու յօդուած վասնայ
սովալուկների. ում որ կը դիմէինք փող խնդրելու
մի պատասխան կը ստանայինք՝ «երկու ամիս
առաջ էի ժողովեցին, բայց ժողոված փողե-
րի գործադրութիւնը չը տեսնեք, մենք մեր փո-
ղերը անել լաւ կը պահէինք, քան թէ ուրիշները»:
Մի այլ իրողութիւն ևս արժանի է ուշադրութեան,
այն է բնիկ կարսեցի գաղթական անտարբերու-
թիւնը դէպի ազգային գործերը ընդհանրապէս և
մասնաւորապէս սոցա սառնասիրտ վերաբերվելը
դէպի թշուառ վանեցիկը: Շըջելով խանութները,
մենք ոչ մի կարսեցի խանութատէրից չը կա-
րողացանք ոչինչ ստանալ: Ամեն մարդ թող իր
զլխի չարէն տեսնի, ահա ըստ մեծի մասին ինչ
պատասխան էինք ստանում, մինչ զի յետին աղ-
քատ օտարականը իր կարողութեամբ չափ նու-
րում էր, և ընդհանրապէս պէտք է ասել, որ դը-
րեթէ բոլոր նուիրատուները, շատ փոքր բացա-
ռութեամբ, օտար քաղաքացիք են, և մեծ մասամբ
պէքսանդրապոլից: Ահա և սոցա ցուցակը, որը
կը խնդրեմք տպագրել:

Կ. Անանիկեանց 35 ր., Ս. Մարտիրոսեանց 30
ր., Գ. Էփրայմեանց 15 ր., տ. Ս. Ղազարեանց 15
ր., Ա. Ղազարեանց 10 ր., Գ. Կաճկաճեանց 10
ր., Գ. Յարութիւնեանց 10 ր., Ս. Բաղդասարեանց
10 ր., Գ. Էփրայմեանց 10 ր., Գ. Աղնաւորեանց
10 ր., Կ. Մկրտչեանց 10 ր., Մ. Պահլաւունի 10
ր., Յ. Այվազեանց 7 ր., Ս. Բաբայանեանց 7 ր.,
Յ. Էլբէյեանց 5 ր., Ա. Սաֆրազեանց 5 ր., Գ.
Գարսաշեանց 5 ր., Ա. Դաւթեանց 5 ր., Գ.
Գալստեանց 5 ր., Գ. Գրիգորեանց 5 ր., Ս. Մը-
կրտումեանց 5 ր., Յ. Կիւրիգեանց 5 ր., Ս. Կու-
ղիկեանց 5 ր., Թ. Ղլթուղիկեանց 5 ր., Ս. Խա-
չատուրեանց 5 ր., Գ. Տէր-Անտոնեանց 5 ր., Գ.
Գալստեանց 5 ր., Մ. Աբաշեանց 5 ր., Ա.
Զալիկեանց 5 ր., Ս. Խանամիրեանց 5 ր., Ս.
Պառաւեանց 5 ր., Կ. Արզաւագուցեանց 5 ր., Մ.
Քահանայ Տէր-Մելքիսեդեկեանց 5 ր., Վ. Նիկո-
ղոսեանց 4 ր., Գ. Ղազարեանց 4 ր., Յ. Կարսի-
նիկեանց 4 ր., Մ. Պապովեանց 3 ր., Գ. Թէլե-
թեանց 3 ր., Տ. Բէժեանց 3 ր., Ա. Մկրտչեանց
3 ր., Ս. Աստղեանց 3 ր., Մ. Տէր-Աստեանց 3 ր.,
Ն. Տէր-Աւետիսեանց 3 ր., Բ. Աբաշեանց 3 ր.,
Յ. Վարդապետարիկեանց 3 ր., Պ. Խրիստեանց 3 ր.,
Վ. Սպառնիկեանց 3 ր., Մ. Մուրադեանց 3 ր.,
Օր. Կ. Ղարիբեանց 3 ր., Յ. Նալբանդեանց 3 ր.,
Ա. Չիկարեանց 3 ր., Խ. Ղազարեանց 3 ր., Յ.
Դոկիկեանց 3 ր., Ղ. Ստամբուլեանց 3 ր., Վ.
Յարութիւնեանց 2 ր., Մ. Ալեքսեանց 2 ր., Յ.
Ղարիբեանց 2 ր., Յ. Միրմանեանց 2 ր., պ. Մա-
րանեանց 2 ր., Մ. Նալբանդեանց 2 ր., Ա. Ղա-
րիբեանց 2 ր., Գ. Մերկուրով 2 ր., Թ. Մարգա-
րեանց 2 ր., Գ. Աբաշեանց 2 ր., Ա. Ստեփան-

հոտանց 2 ր., 3. Մովսէսեանց 2 ր., Ա. Մազ-
մանեանց 2 ր., Պ. Մուսուկեանց 2 ր., Մ. Տէր-
յաւթեանց 2 ր., Ե. Զեյ. Ղարիբեանց 2 ր., Մ.
Ստամբուլեանց 1 ր., Ա. Ալաշկերեանց 1 ր., Զ.
Վահրապեանց 1 ր., Ա. Պապեանց 1 ր., Թ.
Վահրապեանց 1 ր., Ա. Պետրոսեանց 1 ր., Ա.
Ջիզմարեանց 1 ր., Ա. Գրիգորեանց 1 ր.,
Լեւոնյանեանց 2 ր., Մ. Փաղապետեանց 1 ր., Գ.
Փաղապետեանց 1 ր., Վ. Ասլանեանց 1 ր., 3. Հա-
լապետեանց 1 ր., Պ. Ալաշկերեանց 1 ր., 3. Մա-
տինեանց 1 ր., 3. Բալեանց 1 ր., Պ. Քեօսա-
պետեանց 1 ր., Ա. Ուլիսեանց 1 ր., Թ. Անտա-
տատով 1 ր., 3. Գրիգորեանց 1 ր. 60 Կ., Բ.
Պետրոսեանց 1 ր. 50 Կ., Մ. Տէր-Գեորգեանց 1
ր. 50 Կ., 3. Մամիկոնեանց 1 ր., Գ. Նաճա-
պետեանց 1 ր., 3. Աղոյեանց 1 ր., 3. Գարու-
թիւնեանց 1 ր., Վ. Ասլանեանց 1 ր., Մ. Մատի-
նեանց 1 ր., Կ. Դանիէլեանց 1 ր., X. ИВАНОВЪ
1 ր., Վ. Բաբանասեանց 1 ր., Մ. Խորեանց 1
ր., Պ. Արիստակեանց 1 ր., Վ. Ասանաթեանց 1
ր., Կ. Մինասեանց 1 ր., 3. Ունիկեանց 1 ր., Կ.
Փաղապետեանց 1 ր., 3. Պարոնակեանց 1 ր., Գ.
Միլեոնեանց 1 ր., Գ. Յովհաննիսեան 1 ր., Գ.
Յովհաննիսեանց 1 ր., 3. Տէր-Պողոսեանց 1 ր.,
Վ. Բուռնապետեանց 50 Կ., Տ. Զէքէյեանց 50 Կ.,
Վ. Սարուխանեանց 60 Կ., Գ. Թումանեանց 50 Կ.,
Պ. Գևորգեանց 50 Կ., Ա. Կարսեանց 50 Կ., Ա.
Ալաշկերեանց 50 Կ., Գ. Գարութիւնեանց 25 Կ.,
3. Ասանեանց 40 Կ., Կ. Գարութիւնեանց 20 Կ.,
Ա. Կուրկեանց 20 Կ., Մ. Պետրոսեանց 30 Կ.,
Խ. Յովհաննիսեանց 25 Կ., Մ. Մանուկեանց 20
Կ., 3. Մէլուսեանց 20 Կ., Ա. Զարոյեանց 40
Կ., Ս. Նանասեանց 40 Կ., 3. Շամբեանց 40
Կ., Գ. Աղաբաբեանց 15 Կ., Ն. Դուրկարեանց 25
Կ., Կ. Տէր-Ռաֆայելեանց 40 Կ., Խ. Տէր-Պողո-
սեանց 15 Կ., Ն. Ն. 5 Կ., Գ. Աւետիսեանց 15 Կ.,
3. Գապարեանց 15 Կ., Գ. Աստուածատրեանց
20 Կ., Գ. Դաւուղեանց 15 Կ., Գ. Գաճապեանց
20 Կ., Մ. Արապեանց 30 Կ., Ա. Գապարեանց 8
Կ., Ա. Միկայելեանց 15 Կ., Ա. Բէկոյեանց 5 Կ.,
3. Մատիկեանց 20 Կ., Ա. Կուրկեանց 20 Կ.,
Ա. Էդէլսեանց 35 Կ., Ն. Պէտրոսեանց 2 ր.,
3. Կուրկեանց 2 ր., Կ. Միլեոնեանց 2 ր., Գու-
մարեանց 442 ր. 57 Կ., որից զուրս գալով փոստի
ծախք 2 ր. 49 Կ., մնում է 440 ր., 8 Կ.

Ա. Ղազարեանց, Գ. Կաճապեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒՐԱՆՈՒՋԻՆԻՅԱՆԻՅ

Յունիսի 12-ին

Ներկայ ամսոյ 8-ին, կիրակի, սուրբ խաչ վան-
քի պարահում կայացաւ տեւոյց Բարեգործա-
կան ընկերութեան տարեդարձի հանդէսը։
Այդ բարեգործական ընկերութիւնը հիմն դըր-
ված հազար ութ հարիւր վաթսու թաւաննե-
րում, մի քանի բարեմիտ քաղաքացիների աշխա-
տութեամբ և հաստատված ռուսաց տէրութեան
ներքին գործերի նախարարից, այժմ ներկայացնում
է տեղիս մի ազգային, ուսեղ և հաստատուն հիմ-
նարկութիւններից մինը՝ որ արժանի է ուշադրու-
թեան ոչ այնքան իր գործունէութեամբ, որչափ
իր ներթափանց զարգացմամբ։ Սկսեալ այն նախըն-
թաց տարիներից մինչև այսօր, այդ ընկերութիւ-
նը, իր բռնած թէև ոչ աչքի դարձող պողատու,
այլ համեստ գործի ընթացքով, հետզհետէ վա-
տակում է հասարակութեան հաւատը և համակ-
րութիւնը և յաջողում է կազմել մի նշանաւոր
գրամատուցութիւն՝ մօտ 30 հազար ռուբլի իսկ ընկե-
րութեան երկարատեւ գործունէութեան շաւիղն
ցոյց է տալիս մեզ, որ նա ծախսելով ոչ աւելի
քան 23 հազար ռուբլ, մատուցանում է մի շարք
հոգատարութիւնների գրամական նպատակներով թէ
չբաւար հայերի թշուառ դուրսիներ թեթեւացնե-
լու, թէ հայ ուսանողներին և աղէկներին միջոց-
ներ տալով իրանց ուսումը գործը առաջ տանելու
և այլ համեմատն բարի գործերի համար։ Պարզ է
այն որ ընկերութիւնը չունի մի որոշ գործունէու-
թեան շրջան, մի առաջադրած որոշ առարկայ իր
գումարների գործածութեան համար։ Եւսմանակի
պահանջն և տեղիս անհրաժեշտ կարողութիւնները
չէին ներքի այլ ևս ընկերութեան գումարները այդ
տեսակի ի գործ դնելու։ Տարրական ուսման և ար-
հեստագիտութեան գործի կարողութիւնը, որ օ-
րըստօրէ աւելի և աւելի զգալի է լինում մեզա-
նում, ստիպում էր որ այդ գործի վրա աւելի ևս
ուշադրութիւն դարձված լինէր։

Այդպիսի դրութիւնը զբոնք մի քանի բանիմաց
անձինքներին, անցեալ տարվայ ընդհանուր ժողո-
ւում Բարեգործական ընկերութեան, որ տեղի ու-
նեցաւ քաղաքիս մէջ, խորհրդարանի դահլիճում,
յայտնել այս միտքը թէ ընկերութիւնը զարգանա-

լով և աշխուժելով ներթափանց կողմից, անհրա-
ժեշտ պէտք ունի մի նախաամսմանեւ զործու-
նէութեան ծրագրի, որ իր գոյութիւնը աւելի ըզ-
գալի և արդիւնատու լինի հասարակութեան համար,
և համապատասխանող ժամանակի պահանջողու-
թեանը և տեղիս ամենակարգի պէտքերին։ Այդ
միջոց մեծամասնութիւնը ընդունում է և յանձնում
է խորհրդարանին այդ խնդիրը մշակելու, և ներ-
կայացնելու մի պատրաստ նախագիծ այդպիսի
գործունէութեան առաջիկայ ընդհանուր ժողովին,
վերաքննութեան և հաստատութեան համար։
Չը գիտենք, ինչ և ինչ անյայտ պատճառներով
խորհրդարանի անդամները անհրաժեշտ են համա-
րում այս տարվայ ժողովը գումարել սուրբ խաչ
վանքի պարտիզում, որ քաղաքից իր եօթն մղոն
հեռակայութեամբ անշուշտ շատերին արգելադրե-
լով պիտի լինէր ներկայ գտնվելու։ Մենք ոչինչ չէինք
ունենայ նկատելու խորհրդարանի անդամներին
այդ առթիւ, թէ որ ինչպէս անցեալ տարի, ընդ-
հանուր ժողովի նիստը կայանար քաղաքիս մէջ,
իսկ սուրբ պատարագը, տարեդարձի տօնախմբու-
թիւնը, ճաշը, խում ու քէֆը տեղի ունենային սուրբ
խաչ վանքի պարտիզում, որ յիշատի իր ընական
և գեղեցիկ զվարճող ներկայացնում է ամենայն
յարմարութիւններ այդ տեսակ հանդիսակատարու-
թիւնների համար։
Սակայն այս անգամ ընկերութեան խորհրդարա-
նը հրաւիրում է իր կողմից առանձին տոնակիւն-
քով համաքաղաքակից տիկնիւններից շատերին իր
տարեդարձի հանդէսին ներկայ գտնվելու և անդա-
մակութեան մասնակցելու։ Բայց զարմանալի
խորհրդիւն. ինչու չէր հրաւիրել նոյնպէս օրորոց-
ներին, երբ կանացի սեռի դարգացած և կրթեալ
տարրի մեծամասնութիւնը նրանցից է կազմվում,
երբ նրանք ևս կարող են օգտակար հանդիսանալ
այդ նուիրական գործում։ Այնուամենայնիւ ուրա-
խակ է այն երեւոյթը, որ մեզանում արդէն զգում
են շատերը կանացի սեռի գոյութիւնը և օգտա-
կարութիւնը հասարակային կեանքի հանդիսաւորու-
թեան մէջ։ Այս առաջին անգամն էր, որ տեղացի
կիներ իր նեղ և սահմանափակ ընտանեկան կեանքի
չըմանից հեռանալով, հանդիսանում էր նպատակաւ
հասարակային գործերի յառաջադրութեանը։
Հանդիսականների մեծ մասը, սուրբ խաչ վանքի
կիկեղեցում պատարագը լսելուց յետոյ, ինչու վանքի
պարտիզը և գումարակցեալ րօտոնդի դահլիճում,
որ ևս պիտի կայանար ժողովի նիստը և ասարե-
դարձի տօնախմբութիւնը։ Ժամը 1-ին մօտ էր, երբ
հանդիսականները գումարվում էին դահլիճում,
Այդտեղ արդէն պատրաստ էին մի շարք օ-
ղաձև զետեղված սեղաններ ճաշի համար, որոնց
վրա շարված էին աչք հրապուրող պէսպէս խմե-
լիքներ և ուտելիքներ։ Այդ ամենը տեսնելուց յե-
տոյ ոչ ոք չէր կարող դուշակիլ անգամ, որ Բարե-
գործական ընկերութիւնը այդպիսի դրութեան և
պարագաների մէջ պիտի ունենար իր ժողովի նիս-
տը։ Դահլիճը լիքն էր այցելուներով։ Էսկ կանացի
սեռի ներկայութիւնը, որչափ էլ փոքրամասնու-
թիւն կազմէր, այնուամենայնիւ շատ ուրախալի
երեւոյթ էր և աչքի էր դարձում։ Բազմութեան
մեծ մասը առաւօտեան ժամը 8-ից այդտեղ հա-
ւաքված՝ սրտատրոփ անհամբերութեամբ սպա-
սում էր այն րոպէին, որ իր քաղաքածութիւնը կա-
րող լինէր յաջեցնել։ Բանկցելը լավեցաւ մի փոք-
րիկ զանգակի սուր ձայն։ Այդ պ. նախադասի
զանգակն էր, որ հրաւիրում էր անդամներին ուշա-
դրութիւնը։ Անդամների մեծ մասը ստիպված էին
կանգնած մնալու, այնպէս որ շատ դժուարին էր
անգամ տեսնել պ. նախադասին մի փոքրիկ սեղա-
նի առաջ՝ չըլնալուցաւ խորհրդարանի անդամ-
ներով։ Փոքր ինչ յետոյ լավեցաւ պ. նախադաս խ.
Ստեփաննոսեանի ձայնը, որ կարգում էր ընկերու-
թեան 1879 թ. տարեկան հաշիւը։ Այդ հաշիւե-
տութեանից երևում էր, որ ընկերութիւնը ունեցել
է անցեալ տարվայ ընթացքում տարեկան մուտք.
4575 ր.—26, ծախք 2454 ր.—09, իսկ պատրաստի
գրամատուցութիւն 29,168 ր. 36 Կ.։ Արժանի է մտա-
դրութեան այն, որ նոյն տարուայ մէջ անդամների
թիւը 253-ից աւելացել է մինչև 345, Այստեղ
պէտք է թաղցնել այն ևս, որ այդ բանին մասամբ
պատճառ էին եղած իրանց անձնանուէր և ժրա-
ջան աշխատութեամբ, պ. պ. նախ. խ. Ստեփա-
նոսեան և դանձապատ պ. Գէլչեան և մի քանիսը,
որ արժանի են վայելելու անդամների խորին չնոր-
հակալութիւնը։
Սրանից յետոյ պ. նախ. խ. Ստեփաննոսեանը
կարգեալ խորհրդարանի անդամների կարգադրու-
թիւնը անցեալ տարվայ ժողովում յանձնված
խնդրի մասին։ Այդ կարգադրութեանից իմացաւ, որ
մէջ տարվայ ընթացքում խորհրդարանը չէ կա-
րողացած գալ մի որ և իցէ եղբակցութեան և
պատրաստել ծրագրի մի նոր գործունէութեան
համար, այլ հրաւիրում է անդամներին թէ որ նը-

րանցից մինը ունի ի նկատի մի առաջարկութիւն
անել այդ առթիւ, զիմի խորհրդարանին գրաւոր
կերպով։ Եւ այդ հարցը անցաւ այդպէս առանց
որ և է նկատողութեան անդամների կողմից։ Կար-
ծես չար բաղդի բերմամբ ընդհանուր ժողովի և
խորհրդարանի դերերը միմեանց հետ փոփոխված
էին։ Մի կազմակերպութիւն խորհրդարանի 24 ան-
դամներից, չը կարողացաւ ոչ թէ միայն որ և իցէ
ծրագրի պատրաստել, այլ որ և իցէ բաւականա-
ցուցիչ կերպով պատասխանել այդ հարցի նկատ-
մամբ։ Մեծ մասը ներկայ և չող անդամներից չէր
էլ հետաքրքրվում այդ հարցով, նրա համար մի և
նոյն էր թէ իր 5 ռուբլի տարեկան անդամակ-
ցութեան վճարը ի գործ կը դրվի գինեատուն մի
հաստատելու, թէ մի ուսումնարան բանալու, նա
բաւական էր նրանով էլ միայն, որ իր նուիրած
փողը հաշիւը տարին մի անգամ մի լաւ խում ու
քէֆ ունէր։
Արդէն ժողովի նիստը սկսում էր ընդունել մի
անորոշ կերպարանք, երբ անդամներից մինը,
պ. Սալթիքեան, հրաւիրելով պ. նախադասին և ան-
դամների ուշադրութիւնը յայտնեց այն միտքը՝ թէ
շատ դժուարին է ներկայ անյարմար պարագանե-
րի մէջ այլ ևս որ և իցէ կարգով առաջ տանել
նիստը, և թէ անկարելի է ճշգրիտ կերպով 24 նոր
հոգաբարձուների ընտրութիւնները կատարել, և
այդ պատճառաւ առաջարկեց ժողովին յետաձգել
այդ նիստը, բաւականանալով այս օնգամ տարե-
դարձի տօնախմբութեան հանդիսակատարութիւ-
նով։ Կարծես թէ շատ պարզ և հասկանալի էր
այդ առաջարկութիւնը, բայց այնուամենայնիւ
արձագանք չի գտաւ այդ ամբողջի մէջ։ Պ. Ս.
Պալապանեանը և մի քանիսը ընդդէմ է հանդիսա-
ցան այդ առաջարկութեանը, այն պատճառով իբր
թէ շատ դժուարին է միւս անգամ հաւաքել ան-
դամներին մի ժողով կազմելու համար։ Այդ ճշմա-
րիտ էր. միւս անգամ այդպիսի ամբողջ չէր տեսնում
այս կամ այն գործի մէջ որ և իցէ օգուտ իր նիւ-
թապաշտ հակութեանը յազգեցնելու, քանի որ այս
կամ այն հարցը չէր գործում նրա սեպական շահերը,
նա միշտ այդպիսի զեղուածներում ստան և ան-
տարբեր է հանդիսանում, ինչպէս և ներկայ նիս-
տի մէջ։
Այնուհետ, որ անդամները շատցում էին հապ-
ճեպով վերջացնել նիստը և ձեռնարկել խումու-
քէֆին, Բայց մնում էր մի այլ խոնդոտ—որ էր
24 նոր հոգաբարձուների ընտրութիւնը։ Այստեղ
դարձեալ հանդիսանում է պ. Ս. Պալապանեանը,
համոզված թէ մի լոկ ինդիվիդուալ կերպի է այդ
խոնդոտը վերցնել։ Այս անգամ պ. Ս. Պալապա-
նեանը անդորր սրտով յայտնելով իր խորին սրտի
վկայութիւնը և անկեղծ շնորհակալութեան հա-
ւատով խորհրդարանի անդամներին, նրանց
երկու տարվայ ընթացքում ձրիաբար ծառայու-
թեանը և տոկուն աշխատութեանը ընկերութեան
ներթափանց յառաջադրութեան ասպարեզում, ինչ-
դրում է ժողովից թողնել նրանց առանց մի նոր
ընտրութեան՝ հոգաբարձուների պաշտօնի մէջ,
չէնց այդ էլ այդպէս վերջանալու էր, ըստ որում
քանիսները տեղերից բարձրանալով մի և նոյնը
արտայայտում էին գուլիսների շարժումներով։ Բայց
պ. Պ. Սալթիքեանը, ինչպէս չար ոգի այդ ժողո-
վի, կարծես թէ դիտմամբ արգելում էր անդամ-
ներին փոքր ինչ առաջ վայելելու ճաշը, որը ար-
դէն վաղուց նրանց սպասում էր։ Եւ պարզելով
պ. Ս. Պալապանեանի առաջարկութեան անհիմ-
նաւորութիւնը, պ. Պ. Սալթիքեանը յայտնում է
ընդհանուր ժողովի անդամներին, թէ այդպիսի կեր-
պով ընտրութիւններ երբէք կարող չեն տեղի ու-
նենալ, ըստ որում ընդդէմ է ընկերութեան կանո-
նադրութեանը։ Զարմանալի միամտութիւն. պ. Ս.
Պալապանեանը չը բաւականանալով այդպիսի
պարզ մեկնութեամբ, միւս անգամ դիմում է ժո-
ղովին խնդրելով ընդունել իր առաջարկութիւնը,
կարծես թէ իր ինդիվիդուալ դարմանալի հրաշքով
այդ րոպէում պիտի կերպարանափոխվէր մի նոր
Տի ընկերութեան կանոնադրութեան մէջ։ Բայց
նախ. խ. Ստեփաննոսեանի և Պ. Սալթիքեանի այդ
առթիւ ըրած խօսակցութեանից պարզվեցաւ որ ե-
թէ ըստ ներկայ եղող անդամներն էլ, բացի մի-
նից, միայն էին պ. Ս. Պալապանեանի առա-
ջարկութեանը, դարձեալ այդ կերպով եղած ըն-
տրութիւնները իրաւացի չէին կարող լինել։ Սրա-
նից յետոյ ձեռնարկեցին 24 նոր հոգաբարձուների
ընտրութեանը։ Ներկայ գտնված մօտ 90 անդամ-
ներից մի մասը աւելորդ համարեց մասնակցել ըն-
տրութիւններին, միայն 55 անդամներ ներկայաց-
րին քուէական թղթերը։ Մեծ մասը նոր խորհ-
րդարանի հոգաբարձուների ընտրվեցան հիւսնա-
դամներից։ Որչափ կանոնաւորապէս և ճշգրիտ կա-
րելի էր առաջ տանել այդ ընտրութիւնները և
ինչ արդիւնք պիտի տային նրանք այդպիսի պատ-
րաստութեան և պարագաների մէջ, այդ թողնում

եմ հասարակութեան արդարաւոր ըննադատու-
թեանը, միանգամայն աւելացնելով որ այդ ընտ-
րութիւնները կատարվեցան—ad libitum.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ
Յունիսի 14-ին
«Մշակի» № 94 մէջ կարգադրեց Արցախիցի ստորա-
գրութեամբ մի նամակ, որի մէջ շատ սուտ խօսքե-
րից յետոյ, դարձել է դէպի ինձ, մեր քաղաքացինե-
րին և պոլիցիական կառավարութեան, վասնորոյ
խնդրեմ իմ այս քանի տողս 'ի սէր արդարութեան
տեղաւորել ձեր պատուական թերթի մի ան-
կիւնում։ Քաղաքիս մէջ գոյութիւնները, ինչպէս
գրում է պ. Արցախեցին, ոչ թէ որ օր օրի վրա չեն
աւելանում, այլ ընդհակառակը, գրեթէ քոլորովին
ոչնչանում են, համեմատելով ուրիշ քաղաքների
հետ, ընդ նմին նաև գիւղօրէից մէջ, այնպէս որ
ամենայն գիւղական վատահ կարողանում է առանց
հակոգութեան թողնել իր գոյքը և ինքը գնալ իր
գործին։ Այս հաստատ է, որովհետև ես շատ ժա-
մանակ իմ անձնական գործոց պատճառաւ, գտն-
վում եմ գիւղօրէից մէջ և համարեա թէ շատ
քիչ եմ տեսնում գոյութիւններ, իսկ մարդասպա-
նութիւնները, եթէ տարին մի կամ երկու անգամ
պատահում են, այդ չէ նշանակում թէ մարդաս-
պանութիւնը և գոյութիւնը մեզ միշտ սպառնում
են, այլ այս պատահում է նրանից, որ մէկը միւսին
զայրացնում է, որից և տեղական վատ սովորու-
թեամբ, ծագում է մարդասպանութիւն։
Պ. յօդուածագրից կը խնդրեմ ցոյց տալ, թէ
երբ եմ ես տարեկան մի կամ երկու անգամ փող
ժողովել, իբրեւ թէ փողոցների նորոգութեան հա-
մար և ուշ չեմ դարձրել, կամ թէ երբ է եղել, որ
ես լապտերներ եմ ծախել հատը 10 ր., որը 3 ր.
էլ չարժէ. կամ թէ երբ եմ ես քաղաքացիներից
մարդիկ կամ նրանց փոխարէն փող պահանջել,
որպէս երբ զիջելները փողոցներում չըլեն, և
այն, և այլն։
Այն, ես չեմ պարտաւոր սորանից տասը տարի
առաջ քաղաքումս կատարված իրողութիւններին
պատասխանատու լինել։ Գովելի չէ առանց ճիշդ
տեղեկութեան, գրել վեր առնել և զանազան շա-
հեր պաշտպանելու նպատակաւ սորան նրան զիջ-
չել։ Միթէ պ. Արցախեցին չը գիտէ, որ քաղաքը
չունի դրամադուրս և ոչ աւելորդ արդիւնք։ Այն,
եթէ մեր քաղաքը ունենար ուրիշների նման քա-
ղաքական ինքնակարգութիւն, այն ժամանակ կա-
րելի էր աւելի բարեկարգութիւններ սպասել։
Շուշեցիք, որ յայտնի են ամեն քաղաքներում
իրանց ընդունակութեամբ, չեն վրդովվում, երբ որ
մի քանի անձինք նրանց չեն հաւանում և սրա
նրա պատիւը արատաւորում ու նրանց վնասում,
իսկ վնասակար անձանց գողում են։ Ես ամենին
զուրկ չէի դնի այսպիսի զրպարտութիւններին,
եթէ իմ պատուին դիպած չը լինէին։
Քաղաքային դեպուտատ Պետրոս Աղամբեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«НОВОЕ ВРЕМЯ» ԼՐԱԳԻՐ ՀԱՅԵՐԻ

ՄԱՍԻՆ

«Новое Время» լրագրին գրում են թիւր-
բաց հայերի մասին հետեւեալը։
Աւելի ծանր խորհող հայերը շատ լաւ
տեսնում են, որ չը նայելով լորդ Կարնարֆ-
նի, լորդ Գրեյնիլի, մարիլդ Սալիսբրիի, դուքս
Արգայլի և մարիլդ Բատի ճառերին, նրանք ու-
չինչ չեն ստանայ, ինչ որ ցանկանում են ըս-
տանալ, այն պատճառով, որ Հայաստանը Հե-
ռու է, իսկ պետութիւնները խիստ շատ գոր-
ծեր ունեն, որ ժամանակ ունենան Հայաս-
տանով պարագլխելու։ Հայերի ցանկութիւնն է
Բոլորաբայի և Արևելեան Բուլեյիայի պէս
կառավարութիւն ունենալ։ Նրանք կամենում
են, որ սուլթանը թաղաւորի, թողլ տալով
նրանց, որ իրանք իրանց կառավարեն։ Իսկ
ինչ վերաբերում է այն դժուարութիւններին,
որ կարող է առաջ բերել այս նախագիծը
(պղն), նրանք պատասխանում են հետեւեալը.
բոլորովին ի գուր են կարծում, թէ քուրդերը
հակառակ կը լինեն Հայաստանի ինքնավա-

բութեան: Քուրդերը շատ քիւսաներ հասցրին հայերին: Սովի ժամանակ քուրդերը յափշտակում էին, կողպում էին և սպանում էին հայերին, բայց չը նայելով սրան, վերջինները (հայերը) օգնում էին քուրդերին և դանազան տեղերից որպէս օգնութիւնը իրանց ուղարկած փողերի և պաշարեղէնների 25% բաժանեցին նրանց: Քուրդերը, տեսնելով, որ թիւրքաց կառավարութիւնը, որի վրա յոյս ունէին, թողնում է նրանց մեռնել, այն ինչ հայերը, իրանց գոհերը, նրանց օգնութիւն են հասցնում, բոլորովին չփոխված էին: Նսկայն այս բանից յետոյ եկան քուրդերի առաջնորդները հայերի մօտ և յայտնեցին, որ նրանք պատրաստ են խաղաղ և հաշտ ապրել հայերի հետ: Մի և նոյն ժամանակ, բանը նրա մէջն է, որ քուրդերը մեծ մասամբ մահաւորութիւնը ընդունած հայեր են, իսկ կապէս նրանք կէս-մահաւորական և կէս-քուրդական են: Տարին մի անգամ նրանք քրիստոնէայ եկեղեցիներին ոչխարներ են ընծայում, իրանց մօտ հայ քահանայ են հրաւիրում, ստիպում են նրան աղօթքներ կարդալ, երբ հիւանդանում են, և մահից առաջ մինչև անգամ հաղորդում են: Հետեւաբար, եթէ հայերին և քուրդերին հանգիստ թողնեն, նրանք միմեանց հետ համաձայն կապեն: Քուրդերը նեղացնում են հայերին, որովհետեւ մահաւորական իմաստները զրգում են նրանց հայերի դէմ: Հայերը սիրում են կարգը և նրանց միջ կրթված մարդիկ կան, հայ ժողովուրդը զօրեղ է, այնպէս որ բաւական է երկրի կառավարութիւնը յանձնեն նրանց և զէնք տան նրանց ժամադրման կազմակերպելու համար, որ կարծաւորականութիւնը նահանգը կատարելապէս բարեկարգվի: Ամենալաւ ապացոյց, որ հայերը զէնք չեն զործածի քուրդերի դէմ նրանցից վրէժն առնելու համար, կարող է ծառայել հայերի քրիստոնէական յարաբերութիւնը դէպի վերջինները սովի ժամանակ, երբ որ նրանք իրանց ստացած օգնութիւնից մաս հասնեցին քուրդերին:

ԹԻՒՐԿԻԱ

«Голосъ» լրագրի մէջ տպած է հետեւեալ առաջնորդող յօդուածը: Գործերի դուրսիւնը Թիւրքիայի մէջ դարձեալ անհասկոյտացնող բնաւորութիւն է ստանում: Միաժամանակ կոնֆերենցիայի աշխատանքների վերջանալու հետ, Թիւրքիայից այնպիսի լուրեր են ստացվում, որոնք ապացուցանում են, որ թիւրքաց ֆրանսիականութիւնը չափազանց զրգում է: Հեռագրերը մեզ հաղորդեց Նոյի-Բագրի նահանգապետի կորուստը: Պէտք է ասել, որ այդ հեռագիրը բաւական կասկածաւոր է (նորեւրումն ստացված հեռագրերը հաղորդեց, որ նահանգապետը սպանված է, այլ վերադարձված), բայց ուղարկութեան արժանին այդ հեռագրի ձեւը թիւրքերը չէ, այլ քրիստոնէաներին թշնամի այն տրամադրութիւնը, որ սիրում է մահաւորականների մէջ: Մի և նոյն ժամանակ Վ. Պօլսից այնպիսի տեղեկութիւններ են ստացվում, որոնցից երեւում է, թէ Թիւրքիայի մայրաքաղաքի մէջ էլ սկսում է տիրել նոյն տրամադրութիւնը: «Times» լրագրի Վ. Պօլսի թղթակիցը այդ մասին չափազանց նշանաւոր և հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում: Նա պատմում է, որ մի քանի ժամանակ է, ինչ սուլթան Աբդուլ-Համիդ մտածում է, որ քրիստոնէայ պետութիւնները վճռել են արտաքսել թիւրքերին Նուբիայից և օգնեցնել Սա-մանեան պետութիւնը: Նրա կարծիքով Թիւրքիային այդ փոխադրեց աշատելու համար միակ միջոց կայ, այն է յամաւորութեամբ ընդդիմադրել Նուբիայի բոլոր պահանջներին:

Աբդուլ-Համիդի խորհրդատուները, ցանկանալով իրանց տիրող հաւանութիւնը ստանալ, իրանց անհաշտ ֆրանսիականներ են ցոյց տալիս և հաւատացնում են սուլթանին, որ նա կարող է ստիպել Ռուսաստանին և Անգլիային զիջումներ անել, եթէ նա, իբրեւ բոլոր մահաւորականների խաղիչ, կը դիմէ այդ երկու պետութիւնների մահաւորական հպատակներին: Անգլիական լրագրի թղթակիցը այնուամենայնիւ չէ հաւատում այդպիսի մտադրութիւնների ձեւարարութեանը և պնդում է, որ սուլթանը կը վախճնայ այն անհասկանալի պատասխանատուութիւնից, որի մասին նրան ակնարկեց պ. Գօշեն իր առաջին տեսութեան ժամանակ: Այս ենթադրութիւնը թէպէտ ճշմարիտ է, բայց այնուամենայնիւ պէտք է ի նկատի ունենալ, որ սուլթանը կընդդիմանայ պետութիւնների պահանջներին և այնպիսի միջոցների կը դիմէ, որոնց նա զործ էր դնում Բոսնիան և Հերցեգովինան աւստրիական զօրքերով զբաւելու և Վերսոգորիայի հետ վերջին դաշնագրութիւնը կապելու ժամանակ: Շատ կարելի է, որ թիւրքաց կառավարութիւնը կը համաձայնի կոնֆերենցիայի վճռի հետ Ֆրանսիական երկրներ զիջելու վերաբերութեամբ, բայց մի և նոյն ժամանակ կը պատուիրէ տեղացի մահաւորականներին ընդդիմանալ այդ երկրները Ֆրանսիական հետ միացնելուն, իսկ իր զօրքերին կը հրամայէ փախչել և ապստամբների հետ միանալ: Այս ենթադրութիւնը ի նկատի ունենալով, հաւանական է, որ սուլթանը դիմէ ամբողջ աշխարհի մահաւորականներին, պահանջելով նրանցից պաշտպանութիւն և օգնութիւն քրիստոնէայ պետութիւնների «սարսափելի մտադրութիւններին» դէմ: Գուցէ դժուար լինի այժմ խանգարել Բ. Իրան այդ դիտաւորութիւնները, բայց Վ. Պօլսի մէջ կը սխալվեն, եթէ կերեակայեն, որ այս անգամ էլ այդ զործերը անպատիժ կը մնան: Եթէ սուլթանը կը մոռանայ Եւրոպական թագաւորի պարտաւորութիւնները, նրա հետ այնպէս կը վարվեն, ինչպէս ասիացի վայրենիների առաջնորդի հետ:

ՖՐԱՆՍԻԱ

Լրագրիների մէջ կարդում ենք հետեւեալը: Ֆրանսիական սենատը ընդունեց պատգաւաւորների ժողովից հաստատված ամիսատիպի օրէնքի նախագիծը, միայն այնպիսի խմբագրութեամբ, որին ընդդէմ էր մինիստրութիւնը: Այդ խմբագրութիւնը, որ առաջարկված է սենատի անդամ Բօգերիանից, բացառում է ամիսատիպի շնորհէլը հրդեհների զոհողներին և մարդասպաններին, իսկ Մարսել Բարտի խմբագրութիւնը պահանջում էր ամիսատիպ չը տալ այն բոլոր քաղաքական աքսորականներին, որոնք հասարակ քրեական յանցանքներ են զործել, ուրեմն ընդունված խմբագրութիւնը զիջումն է անում մինիստրութեանը: Շատ դժուար է հասկանալ, թէ մինիստրութեան նախագահ Ֆրէսկիեն ինչ պատճառով էր ընդդիմանում Բօգերիանի խմբագրութեանը: Առողջ դատողութիւնը պարզ ասում է, որ մի քաղաքական կարգադրութիւն ընդհանուր մասին չէ կարող վերաբերվել քրեական հասարակ յանցանքներին: Նսկայն պ. Ֆրէսկիեն պէտք է համաձայնէր Բօգերիանի խմբագրութեան հետ զոհնալ այն պատճառով, որ կառավարութեան հակառակորդները առիթ չունենային ասելու, թէ կառավարութիւնը քրեական եղբայրներին և վերադարձնում է նրանց սպանողներին: Մինիստրութիւնը զործի վրա ուրիշ կերպ պէս որ արհեստաւորներ կանչեցին դռները

նայեց: Նա Բօգերիանի վերոյիշեալ խմբագրութեանը վերադասեց պ. Լաբլէի առաջարկած հակառակագիծը, որ պահանջում էր նոյն անպայման ամիսատիպ, միայն կառավարութեան նախագիծից այլ ձևով: Լաբլէ-շի հակառակագիծը մերժվեցաւ 12 ձայների մեծամասնութեամբ: Գրանից յետոյ Բօգերիանի խմբագրութիւնը ընդունվեցաւ 143 ձայների բազմութեամբ 138-ի դէմ, չը նայելով, որ նախագիծը ընտղ մասնաժողովը բոլորովին ընդդէմ էր ամիսատիպ շնորհելուն և ժիւլ Սիմօն էլ նոյն մտքով ձառն առաց: Այնուամենայնիւ զործը դեռ վերջացած չէ: Ֆրանսիական սահմանադրութեան համեմատ պատգաւաւորների ժողովից ընդունված և սենատից փոփոխված օրէնքի նախագիծը վերադարձնում է պատգաւաւորների ժողովին երկրորդ ընտրութեան համար: Եթէ պատգաւաւորների ժողովը կընտրեն սենատի խմբագրութիւնը, նախագիծը օրէնքի ոյժ կը ստանայ, հակառակ գէպընդ մենատը ստիպված կը լինի նորից քննել իրան վերադարձած սկզբնական նախագիծը: Եթէ կառավարութիւնը և պատգաւաւորների ժողովը հարկաւոր կը համարեն պնդել, սենատի մէջ նորից վիճարանութիւններ կը լինեն և այդ դէպքում գուցէ կընդունվի կառավարութեան սկզբնական նախագիծը: Այս դէպքում զործը կերկարի և յուլիսի 2 (14)-ին, Ֆրանսիական ազգային տոնին, կառավարութիւնը չի կարողանայ յայտնել այն հանգստացնող միջոցը (ամիսատիպ), որի անհրաժեշտութիւնը Գամբետտա իր ձառի մէջ զեղեցիկ կերպով նկարագրեց: Գուցէ պատգաւաւորների ժողովը ի նկատի առնի վերոյիշեալ հանգամանքը և ընդունի սենատի խմբագրութիւնը: Այս դէպքում կարող է պատահել, որ Ֆրէսկիեն մինիստրութիւնը հրաժարական տալ և Լէօն Գամբետտայի մինիստրութիւն կազմվի: Ֆրէսկիեն մինիստրութիւնը իր հանրապետական եռանդով միջոցներով բաւական դժուարութիւններ է ծագեցրել, որոնց վերջացնելու համար անհրաժեշտ է Գամբետտայի մինիստրութիւնը: Բերլինի լրագրիներն Փարիզից գրում են հետեւեալ տեղեկութիւնները եղուիաների հիմնարկութիւնները փակելու մասին յունիսի 30-ից: Այսօր առաւօտ դը-Սելի փողոցի մէջ զանգված եղուիաների բնակարանի փակելու մասին ստացվել են հետեւեալ տեղեկութիւններ: Նրբը պօլիցիականները պաշտօնական հաղուստով սկսեցին բնակարանի դռները բաղխել, նրանք խիղիւ բացվեցան: Մի քանի մարդիկ կամուրջում էին պօլիցիայի հետ մղտնել բնակարանը, բայց նրանց արգելեցին: Պօլիցիան փողոցում ներկայ եղողներին մի քանիսին կալանաւորեց և միայնակ մտաւ: Առաւօտեան 4½ ժամին փողոցում ներկայ եղողների թիւը հասաւ 500-ի: Նրանց թիւում կային ուսանողներ և մի քանի կանայք: Քսան մարդկերանցից բաղկացած պօլիցիան մարքեց փողոցը: Հաւաքված ամբոխը հետեց պօլիցիայի հրաւերին և այդ ժամանակ յսում էին մի կողմից կիցցեն եղուիտները, կիցցէ ազատութիւնը, միւս կողմից կիցցէ հանրապետութիւնը: Հինգից քառորդ անց եկաւ պատգաւաւոր կղերական Բօգրի-Գասոն, բայց պօլիցիան նրան ներս չը թողեց, չը նայելով նրա բողոքին: Պօլիցիան չը թողեց նոյնպէս մի քանիսին մտնել բնակարանը: Մի քանի անձինք քահանայից օրհնութիւն խնդրեցին, իսկ պատգաւաւորը խնդրեց օրհնել Ֆրանսիա: Մօտ եօթ ժամին եկաւ պօլիցիական պրեզիկտ Անդրիէ և երկու պօլիցիականների հետ մտաւ բնակարանը: Շուտով այնտեղից դուրս եկան միաբանութեան երեք անդամներ: Մնացած անդամները փակվել էին իրանց խցերի մէջ, այնպէս որ արհեստաւորներ կանչեցին դռները

կոտորելու համար, իսկ ժամի եօթից մնացած անդամները մէկը միւսի ետեկից սկսեցին թողնել բնակարանը: Պատգաւաւորների ժողովի երեք անդամներ և երեք ուրիշները, որոնց թիւում էր և «Union» լրագրի խմբագիրը, կալանաւորվեցան: Եղուիաների հեռանալուց յետոյ մի քանի մարդիկ մտան բնակարանը և կանչում էին զկիցցեն եղուիաները, բայց նրանց պօլիցիան ընդէ: Ժամը տասին այդ փողոցի մէջ կատարեալ հանգստութիւն էր տիրում: Եղուիաները զատարաններին զանգաւորներ են տուել կառավարութեան ոյժ զօրծածելու դէմ: ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ —«Բէյ յսերի» ընկերութեանը հաղորդում են Վ. Պօլսից յունիսի 20-ից, որ Բայազէդի, Ալաշկերտի և Վանի նահանգներում դեռ ևս սովը չարմաղկվում է: Բնակիչները անցնում են ուսաց սահմանը, հաղորդում են, որ 10,000 մարդ, զխաւորապէս քիւրդեր, սովամահ են եղել: Լրագրիները հաղորդում են, որ եղուիաներին արտաքսելու և հոգևոր միաբանութիւնների հիմնարկութիւնները փակելու պատճառով մինչև այժմ մօտ 49 պատգաւաւորներ հրաժարվել են իրանց պաշտօններից, որպէս զի կառավարութեան ճնշման տակ, իրանց խղճի հակառակ վճիռներ չը տան եղուիաների և առհասարակ հոգևորականների զանգաւորներին: Հրաժարական տուող պրոկուրորների թիւը նոյնպէս մեծ է: Գուցէ ստացված տեղեկութիւնների համեմատ այնտեղ հասել է Բէյրութի նահանգապետը, որ իր հետ բերել է Միտհադ-փաշայի նամակները: Այդ նամակներով Միտհադ-փաշա նշաւոր վերանորոգութիւններ է առաջարկում և իր համար աւելի ընդարձակ իրաւունքներ է պահանջում: ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՆԻՑ ՓԱՐԻՑ, 29 յունիսի: Պաշտօնական լրագրի մէջ տպած է մի հրաման, որով կարգադրվում է, մի պատժի սպառնալիքով, բոլորովին ազատել 1870 և 1871 թուականների պատգաւաւորութեան պատճառով բոլոր զատուարարութիւններին, նոյնպէս և նրանց, որոնք մասնակցել են հետեւեալ պատգաւաւորական շարժումներին: ՓԱՐԻՑ, 1 յունիսի: Նրէկ երկկողման ձեռքի Բօշօր հասաւ Լիօնի երկաթուղու կայարանը: Նրան մեծ ամբոխ էր սպասում Բուլվարը լցնող ամբոխը «մարտիլեզ» էր երգում: Պատգաւաւորների ժողովը ընդունեց օրէնքի նախագիծը: Լիօնի մէջ վերականգնվում է կենտրոնական քաղաքային վարչութիւնը: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի: Ներքին առաջին 50% փոխառութեան տիրաժի գլխաւոր տարած գումարները: № սերիի № տոմս. տար. գումար. 19108 . . . 25 . . . 200,000 261 . . . 18 . . . 75,000 17966 . . . 46 . . . 40,000 15851 . . . 34 . . . 25,000 164 . . . 14 . . . 10,000 17324 . . . 47 . . . 10,000 14895 . . . 25 . . . 10,000 5416 . . . 38 . . . 8000 155 . . . 13 . . . 8000 17053 . . . 47 . . . 8000 1556 . . . 41 . . . 8000 4520 . . . 35 . . . 8000 16452 . . . 5 . . . 5000 5526 . . . 35 . . . 5000 13901 . . . 47 . . . 5000 5721 . . . 31 . . . 5000 12410 . . . 37 . . . 5000 8245 . . . 2 . . . 5000 10380 . . . 35 . . . 5000 9858 . . . 14 . . . 5000

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՇԲՈՒՆԻ

Типографія А. А. Михельсона